

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՐԵ

Ս. ԷՋՄԻՍՄԵՆԻ

Ամոյս Ա-ին կիրակի օրը կատարուեցաւ Աթողիկէ Ակեղեցւոյս Ս. Էջմիածնի տօնը:

Այս առթիւ արժանաւոր մեծ հանդէս եղաւ Մայր Աթոռոյս մէջ, ինչպէս և ամեն տարի:

Միաբանութեան սեղանատան մէջ՝ յորում ներկայ էին համայն Ս. ուխտս և յառաջաւոր անձինք Աղաքազատայ և ուխտաւորք և այլք, Գեր. Աղիաղար Ս. Աբբ Ապիսկոպոս մի համառօտ և աւուր հանդիսի յարմար ատենարանութիւն խօսեցաւ. և Մայր Աթոռոյս հաստատութեան և Ազգօգուտ պայծառութեան համար բաժակներ առաջարկեց, և առաջ աղազակներով վայելեցին հանդիսականք:

Նոյնպէս վասն կենաց առողջութեան և երկարութեան և վասն յաջողութեան ամենայն բարի նպատակաց և ձեռնարկութեանց Ա. Ե. Ս. Աթողիկոսի կեղծներով բաժակներ քամեցին:

Ի վերջոյ վասն սեղանակցաց և վասն համայն Հայ Ազգիս բաժակներ խմուելով վերջացաւ սեղանը:

ՆՈՒԷՐ

ԲԱՐԵՊԱՆՏՏՈՒՆԻ ՍՈՓԻԵ ՏԵԿՆՈՋ.

Ի նպատ շինութեանց Մայր Աթոռոյս Տփխիսայ Ազգայիններէն Բարեպաշտուհի Սոփիա այրի Իշխանուհին Յովհաննէսեան Բեկթարակեանց՝ նուիրեց երկու հարբւր բուրջի:

ԲԱՐԵՎ. ՍԱՐԳԻՍ ԱՆՍԷ ՔԱՀԱՆՈՅ

Աշարակայ Ս. Ամենաիրկիչ Ակեղեցւոյ Բարեկրօն Սարգիս Աւագ Վահանայն՝ որ խնդրագրով իւրով ինքնայօժար սիրով յանձնառու եղաւ նոյն Ակեղեցւոյ մօտ եղած սենեկին մէջ Օրիորդաց Կըպրոց բանալ, խոստանալով միանգամայն իւր արդիւնքէն հոգալ նոցա հարկաւոր եղած զրեանքը և այլ պիտոյքը, յաաուկ օրհնութեան կօնդակաւ՝ Նորին Ս. Օծութեան Ա. Ե. հափառ Աթողիկոսի՝ թոյլտուութիւն ստացաւ իւր Ազգօգուտ և եռանդուն նպատակը և ջանքը ի գործ դնելու:

ՑՈՒՅԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒՆՑ Ի ՆՊԱՍՏ ՇՒՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Նորին Ս. Աթողիկոսի)

Ի Չ. Ե. Ս. Աթողիկոսի Կատարած

Հասարակութիւն Փարաքար գեղջ	20
Հասարակութիւն վերին Շէնգաւիթ գեղջ	20
Հասարակութիւն ներքին Շէնգաւիթ գեղջ	15
Հասարակութիւն Նորագաւիթ գեղջ	60
Ղեռնդ քահանայ Մինասարեան. Ս. Ե.	2
Հախվերտի Բարագիւլեան. Ս. Ե.	3
Հասարակութիւն Թաղայ գեղջ	125
Վարապետ քահանայ տէր Վարապետեան	45
Գրիգոր Խուտկեարեան. Ս. Ե.	25
Թարոյ Բաբայեան. Ս. Ե.	15
Մահտեսի Մատթէոս Սողոմոնեան. Ս. Ե.	10
Յակովբ Վարապետեան. Ս. Ե.	10
Ալահվերտի Բաբայեան. Ս. Ե.	5
Հասարակութիւն Քալարայ գեղջ	5
Հասարակութիւն Զափարապատ գեղջ	10
Հասարակութիւն Աարմաղիար գեղջ	5

